



■ Հայկական ու ժերը վնասագերծած են Խանրքի յենակետերը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բանակի մամուլի գրասենյակը կը տեղեկացնէ, որ ռազմաճակատի հարաւոր - արեւմտեան հատուածին մէջ կացութիւնը լարուած կը մնայ: Գործադրելով ընդհանուր հրամանատարութեան պահանջը, ԼՂՀ բանակի մարտիկները միակողմանիօրէն դադարեցուցած են զինուորական գործողութիւնները ռազմաճակատի այդ հատուածին վրայ: Այս քայլը առնուած է միայն այն պատճառով, որպէսզի հնարաւորութիւն տրուի այդ շրջանի խաղաղ բնակչութեան՝ ապահով կերպով փոխադրուելու համար: Սակայն, ինչպէս կատարուեցաւ Խոճալուի զինուորական յենակետերը ոչնչացնելու ժամանակ, ատրպէյճանցիները կրակ բացած են իրենց իսկ ժողովուրդին վրայ:

Ատրպէյճանական զինուորական կազմաւորումները դարձեալ ուժեղացած են Հաղրութի շրջանի Տոլանկար, Արաքիւ, Հին Թաղար գիւղերը: Թշնամին օգտագործած է նաեւ օդուժ: ԼՂՀ բանակի մարտիկները ստիպուած ոչնչացուցած են ատրպէյճանական Խանրք բնակավայրի այն յենակետերը, ուրկէ կը կատարուէին թշնամիի յարձակումները: Երկու կողմերէն ալ կան տուժածներ, որոնց մասին յստակ տուեալներ չկան տակաւին:

Ռազմաճակատի այս հատուածին վրայ կռիւները կը շարունակուին:



† ■ ԼՂՀ ղեկավարները կը հանդիպին Մ. Ա.Ֆ Ուկլասի

ԵԱՀԽի նախագահ տիկին Մարկարէթ Ա.Ֆ Ուկլասի խնդրանքով պաշտօնական այցելութեամբ Ստեփանակերպէն Երևան մեկնեցան ԼՂՀ Պաշտպանութեան Պետական Կոմիտէի նախագահ Ռոպրէթ Քոչարեան եւ ԼՂՀ արտաքին գործոց նախարարի պաշտօնակատար Արքատի Ղուկասեան, հանդիպում ունենալու համար տիկին Մ. Ա.Ֆ Ուկլասի հետ: Բանակցութեանց նիւթն էր ԼՂՀ հակամարտութեան խաղաղ կարգաւորման ուղղութեամբ շարք մը հարցեր, ինչպէս նաեւ Մինսքի խորհրդաժողովէն առաջ Փարիզի մէջ հաստատուած նոր ժամանակացոյցի առաջին կէտերը:



■ Գերի տարուած նորածինի վերադարձը

Իրենց գիւղի՝ Մատաղայի առաջին տեղահանութեան ժամանակ, 1992ի ապրիլ 10ին, գերի ինկաւ նաեւ մէկ տարեկան եւ 4 ամսու Լոլան, որ տուն վերադարձաւ այս տարուայ հոկտեմբերին:

Փոքրիկ հայուհիի գերութիւնը, որ սկսաւ Ատրպէյճանի Միրապաշի շրջանէն եւ հասաւ մինչեւ Կեանճալի մանկատուն, աւելի երկար տեւեց քան անոր ապրած կեանքը:

Փոքրիկին երխտասարդ մայրը՝ Կարինէն այս գծով լսաւ. «Ինձի կը թուէր, որ աղջիկը պիտի չնանչնայի: Երբ փոխանակման վայրը իջեցուցին ինքնաշարժէն, ինքնաբերաբար ճացի, չէր փոխուած: Բայց ինքը զիս չնանցաւ բռնած էր ազերի դայեակի փէշէն եւ չէր ձգեր: Դայեակը գայն ինձմէ աւելի շատ խնամած էր: Այժմ չի խօսիր, իր անունն ալ մոռցած է: Փառք կու տամ Աստուծոյ որ գաւազն հասաւ ինձի, թող բոլոր կորսուածները գտնուին, գերիները՝ տուն վերադառնան. իր գերութեան եւ իմ տանապանքի մասին յետագային կը պատմեմ»:

Ա Տ Ր Պ Է Յ Ճ Ա Ն

Ռուսաստանի Շահերը Անդրկովկասի Մէջ Անփութիս Են

«Ես չէի փորձեր գուշակել Ռուսաստանի նախագահ Պորիս Ելցինի եւ Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Ռոբերտ Քրիստոֆրիի առաջիկայ հանդիպման օրակարգը», ըսած է Պաքուի մօտ Ռուսաստանի լիազօր դեսպան Վ. Շոնիան: Ընդամենն ան ընդգծած է, որ «Փոսթփաքում» գործակալութեան տուած հարցազրոյցին մէջ, Մոսկուայի մօտ Ատրպէյճանի լիազօր ներկայացուցիչի տեղակալ Ռ. Հիւսէյնովի այն ենթադրութիւնը, թէ հայ - ատրպէյճանական հակամարտութիւնը այսօր չի մտնել Ռուսաստանի առաջնահերթ ուշադրութեան ոլորտը եւ հետեւաբար, չի բնարկուիր յառաջիկայ հանդիպման ընթացքին: Ղարաբաղեան խնդրի խաղաղ կարգաւորման գործընթացին ներգրաւուած Ռուսաստանը երբեք պիտի չհետանայ իր սկզբունքներէն եւ Անդրկովկասի մէջ ստանձնած իր դերէն», յայտարարած է դեսպանը:

«ԱՅՅՈՒՐ» ԼՐԱՏՈՒՍԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՍՈՒԹԻՒՆ 40.000 Ազերիներ Անցած Են Իրանի Սահմանը

Թեհրանի մէջ հրատարակուող «Համշարի» թերթը հոկտեմբեր 26ի թիւին մէջ հաղորդած է, որ աւելի քան 10.000 ատրպէյճանցի գաղթականներ վերջին օրերուն իրան փախած են եւ ապաստանած Խիզիլի գաղթավայրին մէջ: Գաղթակայանը ստեղծուած է իրանական «Կարմիր Մահիկ» կազմակերպութեան կողմէ: Ըստ իրանական աղբիւրներու, գաղթավայրին մէջ մինչեւ այսօր ապաստանած են աւելի քան 40.000 գաղթականներ:



Անուանի Մարզիկի Մեծարում

Կապանի մէջ հանդիսաւորապէս նշուած է հայ նշանաւոր ոտնագնդակի մարզիկներէն մէկուն Գրիգոր Համբարձումեանի ծննդեան 60-ամեակը: Սովորական մեծարման միջոցառումէն անկախ՝ երեկոն վերածուեցաւ իսկական տօնահանդէսի, որուն մասնակցեցան հիւրեր հանրապետութեան տարբեր շրջաններէ: Անուանի մարզիկին ու մարզիչին շնորհուեցաւ մետալ մը:



ԵԱՀԽի Նախագահը Հայաստան Այցելեց

Տարածաշրջանի ԵԱՀԽի նախագահը Հայաստան այցելեց: Տարածաշրջանի իրավիճակին տեղոյն վրայ ծանօթանալու նախապէս Պաքու այցելած ԵԱՀԽի գործող նախագահ, Շուէտի արտաքին գործոց նախարար Մարկարէթ Ա.Ֆ Ուկլասը երէկ ժամանեց Երեւան: Պաքուի իշխանութիւններու ներկայացուցիչներուն հետ հանդիպումներէն յետոյ ան հանդիպեցաւ Հայաստանի տարբեր գերատեսչութիւններու ղեկավարներուն հետ: Կը նախատեսուէր հանդիպում նաեւ հանրապետութեան նախագահին հետ: Հանդիպումներուն նախատեսուած էր բնարկման նիւթ դարձնել ԵԱՀԽի յետագայ քայլերու իրականացման հնարաւորութիւնները, հանրապետութեան իշխանութիւններու դիրքորոշումները ԼՂՀ խնդրի յետագայ կարգաւորման գործընթացի վերաբերեալ հաւանաբար նաեւ վերջին օրերու ռազմական գործողութիւններու սաստկացման խնդիրը: Մեր ունեցած տեղեկութիւններով՝ ան Երեւանի մէջ պիտի հանդիպէր նաեւ ԼՂՀ իշխանութիւններու ներկայացուցիչներու հետ:

Ռ Ռ Ի Ս Ա Ս Տ Ա Ն

ՌՌԻՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Հոկտեմբեր 25ին Ռուսաստանի արտաքին գործոց նախարարութիւնը հանդէս եկած է հետեւեալ յայտարարութեամբ. -

«Ղարաբաղեան հակամարտութեան ռազմականակառնութիւնը վրայ տեսական անդորրէ յետոյ վերստին գործի դրուած է գէնքը: Խոր հիասթափութիւն եւ մտահոգութիւն կը յառաջացնէ ժամանակաւոր հրադադարի խախտումը, որը ձեռք բերուած էր Ատրպէյճանի եւ ԼՂՀի միջեւ եւ արձանագրուած Ռուսաստանի արտաքին գործոց նախարարութեան աջակցութեամբ, մինչեւ այս տարուայ նոյեմբեր 5ի ժամկէտով:

Հակառակ ռուսաստանեան միջնորդի կողմէ նպատակաւոր հարցադրմանը, կողմերը չկարողացան կամ չուզեցին յստակօրէն որոշել սահմանագատման գիծը, չկատարեցին այնտեղէն ցանկացած չվերահսկուող կազմաւորումը հեռացնելու իրենց պարտաւորութիւնները: Զնչակուեցաւ նաեւ կողմերու միջեւ այնպիսի մեքենականութիւն՝ որ կանխէ խախտումներու հաւանական դէպքերը:

Այս պայմաններուն տակ սկսած է Ղարաբաղի հայերու յարձակումները Ատրպէյճանի հարաւ - արեւմտեան շրջաններուն վրայ, Լեռնային Ղարաբաղի տարածքի սահմաններէն դուրս: Այս կը նշանակէ հակամարտութիւններու յետագայ տարածում, որը ձմրան շեմին առանձնապէս աղիտալի հետեւանքներ ունի տասնեակ հազարաւոր ատրպէյճանցի նոր փախստականներուն համար: Կեսնապահովման աղբիւրներէն կտրուած են Ատրպէյճանի խտաբնակ շրջանները, բռնազարթուած են խաղաղ գիւղեր, որոնք նոյնպէս բալանի ու աւերումի առարկայ կրնան դառնալ:

Ռուսաստանի արտաքին գործոց նախարարութիւնը Ղարաբաղի զինուած կազմաւորումներուն հաստատակամօրէն կոչ կ'ընէ դադարեցնել յարձակումը, իրենց ուժերը ետ քաշել երման դիրքերուն վրայ»:



ԶԱՆԳԵԼԱՆՆ ԱՎ...

Ըստ «ԱՍՍՍ - ԻՐԱՍՍ» լրատուական գործակալութեան համաձայն, հոկտեմբեր 26էն առդին իրանի սահմանակից Զանգեշանի շրջանը հայկական ուժերու հսկողութեան տակ կը գտնուի: Մարտերու ընթացքին առնուազն հարիւրաւոր մարդիկ սպանուած են, շուրջ 600 ատրպէյճանցի զինուորներ եւ հազարաւոր բնակիչներ փախած են դէպի իրան: